

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ



ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ առկա բազմաթիվ դասակարգումների մեծ մասը չունի օրենսդրական մակարդակում ամրագրման անհրաժեշտություն, այլ միայն անհրաժեշտ է դրանց էությունը և առանձնահատկություններն առավել համակողմանի ուսումնասիրելու և հասկանալու համար:

Ինչ վերաբերում է օրենսդրական դասակարգմանը, ապա ՀՀ օրենսդրական կարգավորումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար, նախ, անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների միջոցով ապահովել ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգումը՝ հիմնադրամի և միավորման: Ընդ որում, «միավորում» հասկացությունը պետք է ներառի միավորվելու ազատության իրավունքի իրացման արդյունք համարվող բոլոր իրավաբանական անձանց:

Հիմնաբառեր- Ոչ առևտրային, իրավաբանական անձ, քաղաքացիական հասարակություն, դասակարգում, հանրային և մասնավոր, կազմակերպչիրավական ձև, քաղաքացիական հասարակության կազմակերպություն, իշխանական լիազորություններ:

ՀՀ օրենսդրությամբ ոչ առևտրային իրավաբանական անձինք որոշակի դասակարգման ենթարկված չեն, մինչդեռ նշված կազմակերպությունների դասակարգման իրավական և գործնական անհրաժեշտության մասին խոսվում է նաև ՀՀ-ում ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերող «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները» վերտառությամբ հայեցակարգում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով: Վկայակոչված կարգավորումից հետևում է, որ ՀՀ օրենսդրությամբ ոչ առևտրային իրավաբանական անձանց հնարավոր կազմակերպչիրավական ձևերը նշված են բաց թվակարգմամբ, ինչի պատճառով հնարավոր չէ հստակ նշել այդպիսի կազմակերպությունների բոլոր հնարավոր տեսակները: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունը փոփոխվել է 16.12.2016 թվականին ընդունված և 04.02.2017 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով: Մինչև նշված փոփոխությունը գործող խմբագրությամբ քննարկվող իրավանորմը, որպես ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձի ինքնուրույն տեսակ, նախատեսում էր իրավաբանական

անձանց միությունը: Մինչդեռ վերոգրյալ թիվ ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով՝ նպատակ ունենալով կրճատելու ոչ առևտրային իրավաբանական անձանց արհեստական տարանջատումները տարբեր տեսակների, սահմանվեց, որ օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում՝ մինչև 04.02.2018 թվականը, իրավաբանական անձանց միությունները պարտավոր են իրենց կանոնադրությունները համապատասխանեցնել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին և վերագրանցվել:

Օ. Ա. Վավիլովան (2012) ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգումը ներկայացնում է դասակարգման միայն մեկ չափանիշով, այն է՝ ոչ առևտրային կազմակերպությունների կազմակերպչիրավական ձևը. հիմնարկներ, սպառողական կոոպերատիվներ, ինքսկառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, բարեգործական և այլ ֆոնդեր, ոչ առևտրային ընկերակցություններ, հանրային և կրոնական կազմակերպություններ (միավորումներ): Մեր կարծիքով, առաջարկվող դասակարգումը ոչ առևտրային կազմակերպությունների համար շատ նեղ է: Ի դեպ նման դասակարգումն, ամենայն հավանականությամբ, գալիս է ՌԴ գործող օրենսդրության կարգավորումներից, որոնք, ըստ էության, նույնությամբ կրկնում են համապատասխան չափանիշի առկայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգման անհրաժեշտությունը («Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՌԴ օրենք, հոդված

2)²:

Վերոգրյալ դասակարգման մեջ (Վավիլովա, 2012), ի թիվս այլնի, բացակայում է ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական նպատակի վերաբերյալ հիշատակումը: Այս մասով նույն՝ Ռ-Օ օրենսդրությամբ, սահմանվում է, որ ոչ առևտրային է հանդիսանում այն կազմակերպությունը, որի գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումը չէ, և որը ստացված եկամուտն իր մասնակցների միջև չի բաշխում³: Ի հակադրություն այս կարգավորման ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվում է, որ ոչ առևտրային են հանդիսանում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպությունները, այսինքն՝ հայաստանյան իրավակարգավորումներում բացակայում է նպատակի տարանջատումը հիմնականի և ոչ հիմնականի, ինչպես նաև առանձնացված չէ ստեղծման և գործունեության նպատակը, ինչն էականորեն բարդացնում է առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարանջատումն ու վերջիններիս, հնարավորինս ամբողջական կարգավորումը:

Ի հակադրումն արդեն նշվածի Լ. Ռ. Լարինան (2010) առաջարկում է ոչ առևտրային կազմակերպությունների հեղինակային դասակարգում, որն ունի հետևյալ տեսքը. ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք զբաղվում են գիտական հետազոտությունների կազմակերպմամբ, կրթությամբ, կազմակերպություններ, որոնք զբաղվում են վերլուծական տեղեկատվության ապահովմամբ և խորհրդատվություններով, որոնք զբաղվում են հասարակական աշխատանքներով և դաստիարակությամբ, որոնք զբաղվում են հրատարակչական, գովազդային և տեղեկատվական աշխատանքներով, որոնք զբաղվում են հանրային-քաղաքական աշխատանքներով, տեղական ինքնակառավարման աջակցությամբ, որոնք զբաղվում են քաղաքացիների մշակութային կյանքի զարգացմամբ, ժամանցի կազմակերպմամբ, իրավական աջակցության կազմակերպմամբ, բարեգործական և մարդասիրական օգնությամբ, երիտասարդության աջակցությամբ, հիվանդների բուժմամբ և վերականգնողական աշխատանքներով, ձեռնարկատիրության զարգացման աջակցմամբ, քաղաքացիների իրավունքների պաշտպանությամբ, փորձաքննությունների անցկացմամբ և հավաստագրերի շնորհմամբ, շրջակա միջավայրի պաշտպանությամբ, կյանքի դժվարին պայմաններում հայտնված անձանց պաշտպանությամբ, քաղաքացիական հասարակության զարգացմանն աջակցու-

թյամբ, և բացի վերոգրյալը՝ կրոնական միավորումներ և կազմավորումներ:

Լարինայի (2010) կարծիքով հասարակության մեջ ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացված դասակարգումը կիրառելիս, հնարավոր է միանգամայն պարզ դիտարկել համապատասխան կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների և ձևերի տարբերությունները՝ կախված կազմակերպության գործառնական առաքելությունից: Այսպես, օրինակ, քաղաքացիների մշակութային մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը, որպես կանոն, սեփական միջոցներն ու պետական աջակցությունն են, իսկ բարեգործությամբ և մարդասիրական գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների համար՝ հիմնական աղբյուր են հանդիսանում նպատակային միջոցները, որոնք ձևավորվում են տարատեսակ նվիրաբերություններից: Բացի այս, հեղինակն անհրաժեշտ է համարում օրենսդրորեն ամրագրել ոչ առևտրային կազմակերպությունների հետևյալ կազմակերպատիրական ձևերը. քաղաքական կուսակցություններ, հասարակական միավորումներ, պետական կազմակերպություններ և միավորումներ, գյուղատնտեսական միավորումներ, տնտեսական զարգացման կազմակերպություններ, կրոնական կազմակերպություններ և որոշ այլ կազմակերպություններ (Լարինա, 2010), որոնք սակայն, կարծում ենք, չափազանց մանրացված են և օրենսդրական առումով միայն ծանրաբեռնելու են կարգավորող նորմատիվ-իրավական դաշտը: Կարծում ենք, դասակարգումը հարկավոր է իրականացնել ելնելով վերջիններիս գործունեության նպատակներից ու ֆինանսավորման աղբյուրների տարբերակումից, որպիսով ուսումնասիրության արդյունքում հնարավոր լինի հասկանալ ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական խմբերի առկայությունն ու կարգավորել դրանց գործունեությունն ըստ խմբերի՝ հստակ գիտակցելով, որ բոլոր կազմակերպությունները նույն կերպ չեն կարող կարգավորվել, քանի որ դրանց միջև առկա տարբերությունները կարգավորումներն այս կամ այն կետում դարձնելու են ոչ կիրառելի կամ ոչ ամբողջական:

Մասնավորապես, նշված դասակարգման կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ոչ առևտրային կազմակերպությունների հայեցակարգով նախատեսված օրենսդրական զարգացման ուղղություններից մեկը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների

ֆինանսական կայունության ապահովումն է⁴, ինչն իրագործելու համար անհրաժեշտ է նաև սահմանել ոչ առևտրային կազմակերպությունների այնպիսի դասակարգում, որը կհատակեցնի դրանց համապատասխան տեսակներին պետական բյուջեից տրվող աջակցության չափը և նպատակահարմարությունը: Ներկայումս ոչ առևտրային կազմակերպությունները պետական բյուջեից աջակցություն ստանում են տնտեսագիտական դասակարգման հիման վրա⁵, մինչդեռ ՀՀ կառավարությունը չունի ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական աջակցության հստակ ռազմավարություն և կառուցակարգեր: Ավելին, ոչ առևտրային կազմակերպություններին տրվող ֆինանսական աջակցության զգալի մասը տրվում է այն կազմակերպություններին, որոնցում պետությունն ունի գերակայող մասնակցություն⁶, նման մոտեցումը, կարծում ենք, արդարացված չէ, քանի որ դրանք չեն կարող համարվել քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Պետական ապարատում ընդգրկված կազմակերպությունների բնույթի վերաբերյալ հստակ պատկերացումը բացակայում է, ի թիվս այլի, նաև ՀՀ կառավարության գործելակարգում և մոտեցումներում, քանի որ դրանք պետական բյուջեից միջոցներ ստանում են և՛ որպես քաղաքացիական հասարակության մաս, և՛ որպես պետական հատվածի կառույցներ: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեի միջոցներից մշված կազմակերպություններին տրամադրվող աջակցության թափանցիկությունը ևս չի ապահովվում և այն հասանելի չէ հանրությանը: Կարծում ենք, մշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է սահմանել, թե որ պայմաններին բավարարող ոչ առևտրային կազմակերպությունները կարող են հավակնել պետական բյուջեից տրվող աջակցության և ինչ ընթացակարգով է տրվելու այդ աջակցությունը:

Վ. Ի. Պիլիպենկոն (2007) առաջարկում է ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգում, որն իր մեջ ներառում է դասակարգման հետևյալ չափանիշները. կազմակերպաիրավական ձևը, հիմնադիրներին միավորման տնտեսական եղանակները, տնտեսական գործունեության տեսակները, գործունեության նպատակները, ֆինանսավորման աղբյուրները, գործունեության տնտեսական բնույթը: Հատկանշական է, սակայն, որ քննարկվող հեղինակը ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար սահմանափակումների և չափանիշների կիրառման անհրաժեշտություն չի տեսնում և չի կապում նման գործու-

նեության իրականացումը ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման և գործունեության նպատակների հետ:

Ե. Վ. Շակլեհնան (2004) իր հոդվածներից մեկում ուշադրություն է հրավիրվում տարբեր ուսումնասիրությունների արդյունքում տարբեր հիմքերով ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգմանը: Վերջինիս կողմից առաջարկված դասակարգումը հիմնականում հաշվի է առնում ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավճակը, որոնք ՌԳ-ում իրենց օրենսդրական ամրագրումն են ստացել ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերում: Ն. Ն. Իբրիսովն (2006), իր հերթին, առաջարկում է ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգում՝ համաձայն հետևյալ հատկանիշների. անդամների առկայություն կամ բացակայություն, սեփականության ձև, ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունից օգուտ քաղող անձանց շրջանակ, գործունեության նպատակ, կազմակերպաիրավական ձև: Այս մասով, կարծում ենք, առավել կարևորվում է գիտակցումն առ այն, որ, ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում դրանցից օգուտ քաղելը կարող է վերաբերել բացառապես այն սոցիալական խմբերին, որոնց շահերի պաշտպանությանը միտված է համապատասխան կազմակերպության գործունեությունը, սակայն ոչ մի դեպքում չի կարող վերաբերել դրա անդամներին, անհատապես՝ կամ հիմնադիրներին՝ մասնավորապես: Բացի այս հարկավոր է հստակ գիտակցել, որ որևէ դեպքում չի կարելի ընդհանրացնել կազմակերպության ստեղծման և գործունեության նպատակներն ու գործունեության տեսակները, որոնց միջոցով ևս հնարավոր է ոչ առևտրային կազմակերպությունները միմյանցից տարանջատել: Բանն այն է, որ եթե ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության տեսակների մեջ կարող է ներառվել եկամտի ստացումը, ապա այն չի կարող լինել գործունեության հիմնական, առավել ևս ստեղծման նպատակ:

Արդյունքում կատարված հետազոտություններն ու դրանց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպությունները միմյանցից տարանջատելու համար հնարավոր է դրանք դասակարգել ոչ միայն գործունեության նպատակներից ելնելով, այլև գործունեության տեսակներից ելնելով: Մ. Վ. Կնյազկայի (2008) կողմից առաջարկվող դասակարգումը բավական լայն է և բնութագրում է ոչ առևտրային կազմակերպությունները տարբեր տեսանկյուններից: Հեղինակն առաջարկում է դասակարգման

հետևյալ հատկանիշները. թիրախային սոցիալական խմբեր, կառավարման եղանակ, սեփականության ձև, ֆինանսավորման աղբյուրներ և ձևեր, գործունեության ծավալներ և այլն: Վերջինս միակն է, ով ոչ առևտրային կազմակերպությունները տարբերակում է ըստ վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների բնույթի:

Գիտական գրականության մեջ առկա են նաև ոչ առևտրային կազմակերպությունների հետևյալ դասակարգումները.

Անդամություն ունեցող և չունեցող կազմակերպություններ. Ոչ առևտրային կազմակերպությունների մեծամասությունը միավորումներ են, այսինքն՝ անդամության վրա հիմնված կազմավորումներ: Միաժամանակ դրանց որոշ ձևեր, այն է՝ հասարակական շարժումներ (մասսայական միավորումներ, որոնք չունեն անդամություն), ֆոնդեր, հասարակական կազմակերպություններ, հանրային ինքնագործունեության մարմիններ, ինքնավար ոչ առևտրային կազմակերպություններ, չունեն անդամություն: Նման կազմակերպությունների դերը սահմանափակ է և կարող է սպառվել միայն կազմակերպության ստեղծմամբ դրա սկզբնական գույքային բազայի կազմավորմամբ: Հարկ է նշել, որ անդամության բացակայությունը բնորոշ է բարեգործական և հանրային շահի այլ կազմակերպությունների համար, որոնք հետապնդում են հանրօգուտ նպատակներ, այլ ոչ կազմակերպության մեջ միավորված որոշակի անձանց շահերը պաշտպանելու նպատակ:

Կառավարող և միավորող կազմակերպություններ. պայմանականորեն ոչ առևտրային կազմակերպությունները կարելի է տարանջատել կառավարող և միավորող կազմակերպությունների: Դրանք կարող ենք, համապատասխանաբար, անվանել կառավարիչներ (ադմինիստրատորներ) և միավորումներ (այլանսներ): Առաջին խմբում ընդգրկված կազմակերպությունների ընդհանուր կոչումն է գույքի կառավարումը կամ այնպիսի գործառնությունների իրականացումը, որոնք զանազան դրդապատճառներից ելնելով հիմնադիրը չի ցանկանում (կամ կարող) իրականացնել ինքնուրույն՝ իր անունից: Այսպիսով, դրանք ստեղծվում են՝ նպատակ ունենալով իրականացնել կառավարչական, հասարակական, իսկ որոշ դեպքերում՝ տնտեսական կամ գույքային բնույթի որոշակի գործառնություններ: Համապատասխան գործառնությունները կրում են հանրօգուտ բնույթ և կայանում են լայն շրջանակի անձանց ծառայությունների մատուցման, միջոցների, տեղեկատվության և այլնի տրամադրման մեջ: Դրանց թվին են դասվում հիմնադրամները, ֆոնդե-

րը, բնակարանի սեփականատերերի ընկերակցությունները, սպառողական կոոպերատիվները, ինքնավար ոչ առևտրային կազմակերպությունները: Նման կազմակերպությունների գործունեությունը կրում է, առաջին հերթին, տնտեսական բնույթ:

Այլանսները (միավորումներ) ստեղծվում են հիմնական մասնագիտական (տնտեսական) գործունեության նկատմամբ երկրորդային նպատակների իրականացման կամ հանրային-քաղաքական նպատակների համար: Այսպիսով, դրանք հնարավոր է տարանջատել հանրային-քաղաքական (հասարակական) և հարակից կազմակերպությունների: Բոլոր այլանսների (միավորումներ) համար ընդհանուր է հանդիսանում այն, որ դրանց ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է հանդիսանում ընդհանուր շահերի արտահայտումն ու պաշտպանությունը, այլ ոչ թե՛ առևտրային գործունեությունը: Դրանք հանդիսանում են մասնակիցների համատեղ նախաձեռնությունների իրականացման, վերջիններիս ընդհանուր խնդիրների լուծման հարթակ և, հաճախ, որևէ նշանակալի նյութական հիմք չեն ունենում:

Հանրային-քաղաքական (հասարակական) ոչ առևտրային կազմակերպությունների թվին, առաջին հերթին, դասվում են հասարակական միավորումները՝ քաղաքացիական կազմակերպություններ, որոնք հիմնված են վերջիններիս շահերի ընդհանրության վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 122, մաս 1): Նման կազմակերպությունների գործունեության մասնակցությունը հանդիսանում է քաղաքացիների կողմից միավորումների սահմանադրական իրավունքների իրացման կարևորագույն ձևերից մեկը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 45):

Հասարակական միավորումը տեսակային հասկացություն է, որը սահմանում է ոչ առևտրային կազմակերպությունների առանձին կազմակերպաիրավական ձևերը:

Հասարակական միավորումների գործունեությունը պետք է լինի հանրային, իսկ դրանց հիմնադիր և ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային՝ հանրամատչելի («Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 24):

Հարակից կազմակերպությունների թվին են դասվում այն կազմակերպությունները, որոնք ստեղծվում են իրենց անդամներից հիմնական տնտեսական կամ այլ մասնագիտական գործունեություն իրականացնելուն աջակցություն ցուցաբերելու, անդամների ընդհանուր պահանջումներին

իրացման, վերջիններիս շահերի պաշտպանության, նրանց գործունեության համար պայմաններ ստեղծելու նպատակով: Ի տարբերություն առաջին խմբի, այն է՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, հարակից կազմավորումների գործունեությունն ուղղված է ոչ թե «արտաքին» միջավայրին, այլ անդամների՝ իրենց հիմնական (մասնագիտական, տնտեսական, առևտրային) գործունեության հետ կապված, ընդհանուր շահերի բավարարմանը:

Փոխադարձ և հանրային շահի կազմակերպություններ. Որոշ հեղինակներ առաջարկում են ոչ առևտրային կազմակերպությունները տարանջատել հետևյալ կերպ.

1. Իրենց անդամների փոխադարձ շահերի բավարարմանն ուղղված կազմակերպություններ (փոխադարձ շահի կազմակերպություններ),
2. Կազմակերպություններ, որոնք ուղղված են հանրային շահի բավարարմանը (հանրագուտ կազմակերպություններ) (Իվանովա, Լիորկին, Տոլմասովա, 2004)

կամ, այլ կերպ ասած, փոխադարձ (խմբային) և հանրային (ողջ հասարակության շահին ուղղված) շահի կազմակերպություններ (Կվաշոնկին, 2005):

Փոխադարձ շահին ուղղված կազմակերպությունների շարքին հնարավոր է դասել սպառողական կոոպերատիվները, ոչ առևտրային ըկերակցությունները և այլն: Այդ կազմակերպությունները սպասարկում են անդամների տնտեսական (այդ թվում՝ կենցաղային) և կորպորատիվ շահերը:

Ի տարբերություն վերոգրյալների հանրային շահի կազմակերպությունների գործունեության նպատակներն ընկած են քաղաքացիական հասարակության գործառնափոխման ոլորտում և չեն վերաբերում մասնակիցների անձնական շահերին: Այս խմբին հնարավոր է դասել բարեգործական կազմակերպությունները¹⁰: Դրանք գործում են ոչ թե հիմնադիրների (մասնակիցների) շահերից, այլ ներկայացնում են հասարակության կամ որոշակի շրջանակի անձանց, օրինակ, անապահով կամ կարիքավոր քաղաքացիների (որբերի, գործազուրկների, հաշմանդամների, բռնության զոհերի, բնական աղետների հետևանքով տուժած անձանց և այլն) շահերը: Միաժամանակ բարեգործական կազմակերպությունների ստեղծման հիմքում միշտ ընկած է մասնավոր շահը՝ հանրային-իրավական կազմավորումները, դրանց մարմինները, ինչպես նաև պետական և տարածքային կառավարման մարմինները չեն կարող հանդես գալ բարեգործական կազմակերպությունների հիմնադիրների դե-

րում:

Ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգման հիմնահարցին անդրադարձ է կատարվել նաև միջազգային իրավական ակտերով: Մասնավորապես՝ ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգմանն անդրադարձել է 2007 թվականի հոկտեմբերի 10-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված թիվ CM/Rec(2007)14 հանձնարարականը (այսուհետ նաև Հանձնարարական), որը վերաբերում է Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակին¹¹: Ըստ Հանձնարարականի՝ ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ անդամություն կամ չունենալ, որը հիմնված է լայն առումով «Հիմնադրամ» և «Միավորում» հասկացությունների տարբերության վրա: Հանձնարարականի բացատրական հուշագրի համաձայն՝ «Միավորում» է համարվում անձանց միությունը որոշակի նպատակ իրագործելու շուրջ, իսկ «Հիմնադրամ» է համարվում որոշակի սեփականության հատկացումը կանխորոշված նպատակի իրագործմանը¹²: Ավելին, բացատրական հուշագիրը¹⁴ ոչ առևտրային կազմակերպությունների նշված դասակարգման համար հիմք է ընդունում 24.04.1986 թվականի «Միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին իրավաբանական անձ ճանաչելու մասին» եվրոպական կոնվենցիան, որը նույնպես առաջարկում է ոչ առևտրային կազմակերպությունների վկայակոչված դասակարգումը¹⁵: Նշված Կոնվենցիայի բացատրական զեկույցում հստակ նշվում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները դասակարգվում են միավորումների ու հիմնադրամների, ինչպես նաև այլ մասնավոր կազմակերպությունների: Ընդ որում, ընգծվում է, որ այլ «մասնավոր կազմակերպություններ» եզրույթն ընդգրկում է որոշ կազմակերպություններ՝ արհեստակցական միություններ, կրոնական կազմակերպություններ, փոխադարձ կազմակերպություններ (mutual companies), որոնք թեև իրենց կառուցվածքով և նպատակներով նույնանման են միավորումներին, սակայն Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետություններում դրանք իրավաբանորեն ընդգրկված չեն «միավորում» եզրույթի ներքո¹⁶:

Անդրադառնալով այլ պետությունների օրենսդրական ակտերին՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Վրաստանի Հանրապետությունում մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք դասակարգվում են առևտրային և ոչ առևտրային¹⁷, իսկ վերջիններս էլ կարող են ստեղծվել որպես միավորում կամ հիմնադրամ¹⁸: Միավորում է հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարվում այն իրավաբանական անձը, որում անձինք միավորվել են որոշակի նպատակի իրականացման համար և որի գոյությունը կախված չէ իր անդամների փոփոխությունից, իսկ հիմնադրամ է համարվում այն անկախ իրավաբանական անձը, որը չունի անդամություն և որին մեկ կամ մի քանի հիմնադիրներ փոխանցում են գույք սեփականության իրավունքով՝ հանրային, օգտակար և ընդհանուր նպատակի իրագործման համար¹⁹։ Ջոն Հոփկինսի անվան «Ոչ առևտրային կազմակերպությունների համեմատական ծրագրի» շրջանակներում ուսումնասիրվել է ոչ առևտրային կազմակերպությունների օրենսդրական դասակարգումը՝ հիմք ընդունելով Արգենտինայի քաղաքացիական օրենսգրքում ամրագրված մասնավոր կազմակերպություն համարվող ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգումը՝ միավորումների և հիմնադրամների²⁰։ Նշված աշխատության մեջ բացահայտելով «հիմնադրամ» և «միավորում» հասկացությունների տարբերությունները, նշվում է, որ միավորումը ստեղծվում է «սուբյեկտիվ հիմքի»՝ նրա անդամների հիման վրա, մինչդեռ հիմնադրամն ունի «օբյեկտիվ հիմք»՝ որոշակի կապիտալ, որն առանձնացվում է որևէ նպատակի իրագործման համար և այդ նպատակով ստեղծվում է կազմակերպություն, որը կարող է կառավարվել ֆիզիկական անձանց կամ առանձին իրավաբանական անձի կողմից²¹։ Բացի այդ, միավորման նպատակները կարող են փոփոխվել անդամների մեծամասնության որոշմամբ, մինչդեռ հիմնադրամի նպատակները սահմանվում են հիմնադրի կողմից և չեն կարող փոփոխվել մասնակիցների որոշմամբ²²։ Միավորումները կարող են ունենալ տարբեր նպատակներ՝ մշակութային, բարեգործական, գիտական, հետազոտական, որոնք կարող են իրականացվել միավորման անդամների շահերը բավարարելու համար, մինչդեռ հիմնադրամի նպատակը միշտ ուղղված է երրորդ անձանց և ընդհանուր բարիքին։ Նիդեռլանդներում, որտեղ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը գնահատվում է որպես աշխարհում ամենաարդյունավետներից մեկը, ևս վերջիններս դասակարգվում են միավորումների (vereniging) և հիմնադրամների (stichting)²³։

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ODIHR) և «Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողով) փորձագիտական աջակցությամբ 2015 թվականին պատ-

րաստվել է ուղեցույց (այսուհետ՝ Ուղեցույց)՝ միավորվելու ազատության իրավունքի իրացման կապակցությամբ, որի նպատակն է միավորվելու ազատության իրավունքի իրացումն ապահովող օրենսդրական կարագավորումներն ամբողջական և միջազգային ստանդարտներին համահունչ դարձնելուն ուղղված խորհրդատվություն տրամադրել ԵԱՀԿ անդամ պետություններին²⁴։ Նշված փաստաթղթի համաձայն՝ միավորումը կազմակերպված, անկախ, ոչ առևտրային մարմին է, որը ձևավորվել է ընդհանուր գործունեություն, շահեր կամ նպատակներ ունեցող անձանց կամավոր միության հիման վրա։ Միավորումը կարող է չունենալ իրավաբանական անձի կարգավիճակ, սակայն այն պետք է ունենա որոշակի կառուցվածք կամ կազմակերպվածություն²⁵։ Ուղեցույցը հստակ ընդգծում է, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է տվյալ հաստատությունը դասակարգվում ներպետական օրենսդրությամբ և անկախ այն բանից, թե արդյոք այն օրենսդրությամբ համարվում է միավորում, թե ոչ։ Կարևորն այդ հաստատության էությունն է, որի հիման վրա է որոշվում այն, թե արդյոք տվյալ կառույցը կընդգրկվի միավորվելու ազատության իրավունքի պաշտպանության ներքո։ Թույլատրելի չէ այնպիսի օրենսդրության առկայությունը, որը մման հաստատությունը չի ճանաչում որպես միավորում կամ նպատակ է հետապնդում դուրս բերելու այն միավորվելու ազատության իրավունքի պաշտպանությունից²⁶։ Այսինքն Ուղեցույցի ուսումնասիրությունից բխում է, որ ներպետական օրենսդրական մակարդակում «միավորում» հասկացության ներքո անհրաժեշտ է նախատեսել միավորվելու ազատության իրավունքի հիման վրա ձևավորված կազմակերպությունները։

Միավորվելու ազատության իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, նախատեսված է 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 28-րդ, 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 22-րդ հոդվածներով։ Ընդ որում, 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունք-

ների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Հետևաբար, Ուղեցույցում բացահայտված միավորվելու ազատության իրավունքի բովանդակությունը կարող է հիմք ընդունվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի համար Սահմանադրության համապատասխան հողվածները մեկնաբանելիս:

Ուղեցույցի համաձայն՝ միավորումների մեջ ներառվում են կրոնական կազմակերպությունները, կուսակցությունները, արհեստակցական միությունները, մարդու իրավունքների պաշտպանները, ոչ կառավարական կազմակերպությունները: Ընդ որում, Ուղեցույցում նշվում է, որ միավորվելու ազատության իրավունքի ներքո ընդգրկվում են ոչ բոլոր ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք նախատեսված են Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 10-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված թիվ CM/Rec(2007)14 հանձնարարականով: Միավորվելու ազատության իրավունքի պաշտպանության ներքո չի գտնվում

նշված կազմակերպությունների այն մասը, որոնք չունեն անդամություն կամ չունեն մի քանի հիմնադիրներ²⁷: Այսինքն՝ կարելի է եզրահանգել, որ վկայակոչված Հանձնարարականի իմաստով և դրա բացատրական հուշագրում նշված «հիմնադրամ» հասկացության մեջ մտնող ոչ առևտրային կազմակերպությունները չեն համարվում միավորվելու ազատության իրավունքի դրսևորման արդյունք և չեն գտնվում դրա պաշտպանության ներքո: Հետևաբար օրենսդրական առումով «հիմնադրամ» և «միավորում» հասկացությունների դասակարգումը բխում է նաև այդ հանգամանքից, որ թեև երկուսն էլ ոչ առևտրային կազմակերպություն են, սակայն միայն առաջինն է համարվում միավորվելու ազատության իրավունքի դրսևորում:

¹ Տե՛ս, «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները հայեցակարգ» էլեկտրոնային ռեսուրս. <http://moj.am/legal/view/article/614> (վերջին մուտք 09.11.17):

² Տե՛ս, Федеральный закон от 12 января 1996 г. N 7-ФЗ «О некоммерческих организациях» [համացանցային ռեսուրս] // КонсультантПлюс: сайт. URL: <http://www.consultant.ru/popular/nekomerz/> (վերջին մուտք 09.11.17):

³ Տե՛ս, նույն տեղում:

⁴ Տե՛ս, «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գրանցման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները» հայեցակարգ, 10-րդ բաժին, էլեկտրոնային ռեսուրս. <http://moj.am/legal/view/article/614> (վերջին մուտք 09.11.17):

⁵ Տե՛ս, նույն տեղում, կետ 10.2:

⁶ Տե՛ս, նույն տեղում, կետ 10.3:

⁷ Տե՛ս, Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում: PFCs, USAID, CDPF, Երևան 2012, էջ 5; 10:

⁸ Հասարակական կազմակերպությունների «անդամ» և «մասնակից» եզրույթները միարժեք չեն: Հասարակական կազմակերպությունների մասնակից են հանդիսանում այն անձինք, որոնք մասնակցում են դրա գործունեությանը (պաշտպանում են դրա նպատակները կամ մասնակցում են դրա գործունեությանը) առանց իրենց մասնակցության պայմանների պարտադիր ձևակերպման: Անդամությունը ենթադրում է առավել սերտ փոխկապակցվածություն. Համապատասխան անձանց մասնակցությունը կազմակերպության գործունեությանը փաստաթղթավորվում է, անդամներ ոչ միայն ունեն որոշակի իրավունքներ, այլև կրում են որոշակի պարտականություններ, որոնք սահմանվում են համապատասխան կազմակերպության կանոնադրությամբ:

⁹ Ոչ առևտրային կազմակերպությունների որոշ տեսակներ, օրինակ, ոչ առևտրային ընկերակցությունները, ունիվերսալ են, քանի որ պարունակում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խմբի կազմակերպությունների տարրերը:

¹⁰ Բարեգործությամբ կարող են զբաղվել ամենատարբեր կազմակերպարարական ձևերի կազմակերպությունները և, առաջին հերթին, հիմնադրամները: Դրա հետ միաժամանակ, նախատեսված են առանձին կազմակերպարարական տեսակի կազմակերպություններ, այն է՝ բարեգործական կազմակերպությունները:

- ¹¹ Առավել մանրամասն տե՛ս, Legal Status of Non-governmental organizations in Europe: Recommendation CM/Rec(2007) 14 and explanatory memorandum, Council of Europe Publishing, էլեկտրոնային ռեսուրս <https://rm.coe.int/16807096b7> (վերջին մուտք 09.11.17):
- ¹² Տե՛ս, նույն տեղում, 1-ին սկզբունքի 2-րդ կետ:
- ¹³ Տե՛ս, նույն տեղում, 22-րդ կետ:
- ¹⁴ Տե՛ս, նույն տեղում:
- ¹⁵ Տե՛ս, Explanatory Report to the European Convention on the Recognition of the Legal Personality of International Non-Governmental Organisations, 6-րդ կետ, էլեկտրոնային ռեսուրս <https://rm.coe.int/16800ca439> (վերջին մուտք 09.11.17):
- ¹⁶ Տե՛ս, նույն տեղում:
- ¹⁷ Տե՛ս, The Civil Code of Georgia, հոդված 25, էլեկտրոնային ռեսուրս: <http://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ge/ge012en.pdf> (վերջին մուտք 09.11.17):
- ¹⁸ Տե՛ս, նույն տեղում, հոդված 30:
- ¹⁹ Տե՛ս, նույն տեղում:
- ²⁰ Տե՛ս, Campetella, Andrea, Inés González Bombal, and Mario Roitter. “Defining the Nonprofit Sector: Argentina.” Working Papers of the Johns Hopkins Comparative Nonprofit Sector Project, no. 33 edited by Lester M. Salamon and Helmut K. Anheier. Baltimore: The Johns Hopkins Institute for Policy Studies, 1998 էջ 9, էլեկտրոնային ռեսուրս http://ccss.jhu.edu/wp-content/uploads/downloads/2011/08/Argentina_CNP_WP33_1998.pdf (վերջին մուտք 09.11.17թ.):
- ²¹ Տե՛ս, Campetella, Andrea, Inés González Bombal, and Mario Roitter. “Defining the Nonprofit Sector: Argentina.” Working Papers of the Johns Hopkins Comparative Nonprofit Sector Project, no. 33 edited by Lester M. Salamon and Helmut K. Anheier. Baltimore: The Johns Hopkins Institute for Policy Studies, 1998 էջ 9, էլեկտրոնային ռեսուրս http://ccss.jhu.edu/wp-content/uploads/downloads/2011/08/Argentina_CNP_WP33_1998.pdf (վերջին մուտք 09.11.17թ.) էջ 13:
- ²² Տե՛ս, նույն տեղում:
- ²³ Տե՛ս, Dutch Civil Code, Book 2, Title 2.2, 2.6 էլեկտրոնային ռեսուրս <http://www.dutchcivillaw.com/civilcode-book022.htm> (վերջին մուտք 09.11.17):
- ²⁴ Տե՛ս, Guidelines on freedom of association, Published by the OSCE’s Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) Miodowa 10 00-557 Warsaw Poland էլեկտրոնային ռեսուրս <http://www.osce.org/odihr/132371?download=true> (վերջին մուտք 09.11.17):
- ²⁵ Տե՛ս, նույն տեղում էջ 28:
- ²⁶ Տե՛ս, նույն տեղում:
- ²⁷ Տե՛ս, Guidelines on freedom of association, Published by the OSCE’s Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) Miodowa 10 00-557 Warsaw Poland էլեկտրոնային ռեսուրս <http://www.osce.org/odihr/132371?download=true> (վերջին մուտք 09.11.17), էջ 33:

Գրականության ցանկ

1. Вавилова О. А. Некоммерческие организации: современная классификация / О. А. Вавилова // Некоммерческие организации в России. М., 2012.
2. Ларина Л. Р. Источники финансирования некоммерческих организаций и управление ими / Л. Р. Ларина // Некоммерческие организации. Уральск, 2010.
3. Пилипенко В. И. Какие некоммерческие организации полезны обществу / В. И. Пилипенко // Тезисы выступления на гражданских слушаниях (13–15 дек. 2007 г., С.-Петербург). СПб., 2007.
4. Шаклеина Е. В. К вопросу о классификациях некоммерческих организаций / Е. В. Шаклеина // Актуальные проблемы юридической науки и правоприменительной практики : сб. науч. тр. III Межрегион. науч.-практ. конф., г. Киров, 15 окт. 2004 г. : в 2 ч. Ч. 2. Киров, 2004.
5. Ибрисов Н. Н. Эффективное руководство и управление НКО / Н. Н. Ибрисов // Ассоциация центров поддержки гражданского общества. Бишкек, 2006.
6. Князева М. В. Тенденции развития некоммерческих организаций в РФ / М. В. Князева // Инновационная экономика в России: проблемы и перспективы : сб. науч. тр. Всерос. конф. студентов, аспирантов и молодых ученых. Томск, 2008.
7. Иванова И. Ю., Лиорокина М. И., Толмасова А.К.: Налогообложение российских не коммерческих организаций. Теория и практика, Москва 2004.
8. Квашонкин А. В. : Юридическо-правовые формы, создание и регистрация не коммерческих организаций в Российской Федерации. Проблемы и особенности законодательства, Журнал Государственное управление N 6, 2005.

Геворг Погосян
Аспирант кафедры гражданского права
юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Классификация некоммерческих организаций

Классификация некоммерческих организаций является фундаментальным вопросом изучения регулирования правоотношений с участием некоммерческих организаций. Следовательно в юридической литературе данный вопрос мало изучен, а бытующие мнения рознятся по логике и критериям, возникает необходимость не только изучить возможность классификации данных организаций, но и предложить более приемлемые критерии для данной классификации.

Наиболее общее правило в определении критериев классификации представляет собой подчеркивание двух основных, видов некоммерческих организаций- организации общественного и частного сектора. Не смотря на то, что некоммерческими принято считать так же организации подотчетные государству, все же общественнонеопределенные и частноопределенные некоммерческие организации довольно разные институты, которые нужно изучать учитывая различия и отличительные черты каждого.

Ключевые слова: *не коммерческий, юридическое лицо, классификация, организационно-правовая форма, неправительственный, не государственный, критерии классификации, общественные и частные*

Gevorg Poghosyan
PhD Researcher at the Chair of Civil
Law Faculty of Law Yerevan State University

SUMMARY

Classification of nonprofit organizations

The existing approaches about classification of non profit organizations are various and have a different logic and criterions. It is necessary to study, among others, also to discover whether any or some of them are more acceptable than others.

The most global classification is the segregation to public and private interest sectors, according to the aim of their foundation. It is clear that the public related and private sector non profit organizations are obviously different either in their structure or in their activity, so all the rest of the criterions must be upraised taking into consideration the above mentioned global classification.

Keywords: *nonprofit, private and public, legal entity, classification, classification of nonprofit organizations, criterions of classification, public and private interests, organizational forms.*